

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 6/3-Լ

Ք. Երևան

14 հունվարի 2022 թ.

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 2-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝

ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝

1) Երևանի պետական համալսարանի «Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը բաժանման եղանակով վերակազմակերպել «Անձնակազմի կառավարման բաժին» և «Իրավաբանական ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումների:

2) Երևանի պետական համալսարանի «Մինչհամալսարանական կրթության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

3) Երևանի պետական համալսարանի «Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Դոկտորական կրթության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

4) Երևանի պետական համալսարանի «Հանրային կապերի ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Հանրային կապերի և մարքեթինգի վարչություն» կառուցվածքային ստորաբաժանման:

5) Երևանի պետական համալսարանի «Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Շարունակական կրթության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

6) Ստեղծել Երևանի պետական համալսարանի «Ռազմավարական պլանավորման կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

7) Լուծարել Երևանի պետական համալսարանի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության շտաբ» կառուցվածքային ստորաբաժանումը:

8) Լուծարել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի «Տավուշ» հետազոտական կենտրոնը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ